ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	ՀՕ-232-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2006.12.25/66(521) Հոդ.1384	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	27.11.2006
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	19.12.2006
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	25.03.2007	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

[+] Կապեր այլ փաստաթղթերի հետ
[+] Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2006 թվականի նոյեմբերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի (այսուհետ՝ Ջրի ազգային ծրագիր) սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, Ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումները՝ ելնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

Հոդված 2. Ջրի ազգային ծրագրի մասին օրենսդրությունը

Ջրի ազգային ծրագրի սահմանումը և իրականացումը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով, իրավական այլ ակտերով և միջազգային պայմանագրերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Գ Լ ՈՒ Խ 2

ՕՐԵՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդված 3. Օրենքի նպատակը

Օրենքի նպատակն է օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բնակչության և տնտեսությ պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ռազմավարական ջրային պաշ կազմավորման և օգտագործման, ազգային ջրային պաշարի պահպանության, Հայաստանի Հանրապետության ջրային օրենս և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խնդիրների լուծման ուղղված միջոցառումների սահմանումը:

Հոդված 4. Օրենքի խնդիրները

1. Օրենքի խնդիրներն են՝

1) ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների պահպանմանը և ավելացմանն ուղղված միջոցառումների սահմանումը, ջրային համակարգերի դասակարգումը, պետական նշանակության ջ համակարգերի որոշման չափանիշների և այդ համակարգերի ցանկի սահմանումը.

2) ջրօգտագործման վճարի առավելագույն և նվազագույն չափերի, ներառյալ՝ ջրային ռեսուրսների արդյունահանման, վերադարձման և բնապահպանական վճարների դրույքաչափերի սահմանումը.

3) ջրերի նկատմամբ առաջարկի և պահանջարկի գնահատումը.

4) ջրային ռեսուրսների ամբարման, բաշխման և օգտագործման ռազմավարության սահմանումը.

5) Ջրի ազգային ծրագրի կատարումն ապահովող իրավական ակտերի ընդունման ու կատարման, դրանց կատարելագոր վերաբերյալ առաջարկությունների, ինչպես նաև պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գործողությունների համակարգմանն ուղղված միջոցառումների սահմանումը.

6) ջրային նորմերի մշակմանը, էկոլոգիական թողքերի մեծությունների և ջրերի անվերադարձ վերցման սահմանային թույլատրելի ծավալների ճշգրտմանը, հատուկ պահպանվող ավազանային տարածքների կամ դրանց որևէ մասի ցանկի, ջրա ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետների գոտիների մշակմանը, ջրաէկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների կանխմանն ու ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումների սահմանումը.

7) Ջրի ազգային ծրագրում ընդգրկված միջոցառումների նկարագրի, ծավալների, դրանց իրականացման համար պատասխանատու մարմինների և ժամանակացույցի սահմանումը.

8) Ջրի ազգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական պահանջների և ֆինանսավորման առաջարկ աղբյուրների սահմանումը.

9) հասարակության իրազեկության ապահովումը:

2. Ջրի ազգային ծրագրի խնդիրներն իրականացնելու համար սահմանվում են կարճաժամկետ (մինչև 2010թ.) ծրագրեր, ո ներկայացված են Հավելվածում: Միջնաժամկետ (2010-2015թթ.) և երկարաժամկետ (2015-2021թթ.) միջոցառումների ծրագրե մշակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և ներկայացվում են քննարկման Ջրի ազգային ծրագ թարմացման ժամանակ:

Գ Լ Ո Ւ Խ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսները

Հայաստանի Հանրապետության ջրային հաշվեկշռի տարրերի բաշխումը՝ ըստ 14 խոշոր գետային ավազանների, գետավազանային կառավարման տարածքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսները, ներառյա օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական պաշարը, ազգային ջրային պաշարը (ընդհանուր և ըստ գետավազանա կառավարման տարածքների), և էկոլոգիական թողքերի մեծությունները ներառվում են ջրավազանային կառավարման պլաններում և սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

(5-րդ հոդվածը խմբ. 21.12.15 ՀՕ-22-Ն)

Հոդված 6. Օգտագործելի ջրային ռեսուրսները

1. Օգտագործելի ջրային ռեսուրսները ներառում են Հայաստանի Հանրապետության տարածքում ձևավորվող գետային հ անդրսահմանային Արաքս և Ախուրյան գետերի հոսքի Հայաստանի մասնաբաժինը և վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսները, բացառությամբ էկոլոգիական թողքի: Արարատյան դաշտի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսները կազմում են 1.1 մլրդ մ^3/տարի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ջրավազանային կառավարման պլաններում սահմանվ օգտագործելի ջրային ռեսուրսների մեծությունները՝ ըստ առանձին գետավազանների, ենթակա են գրանցման ջրային պետակ կադաստրում:

3. Ջրօգտագործման թույլտվությամբ տրվող ջրօգտագործման ծավալների գումարային մեծությունները՝ ըստ առանձին ջրային ռեսուրսների, չեն կարող գերազանցել ջրավազանային կառավարման պլաններով սահմանված՝ դրանց օգտագործելի ջրային ռեսուրսների ծավալները:

(6-րդ հոդվածը խմբ. 21.12.15 ՀՕ-22-Ն)

Հոդված 7. Ռազմավարական ջրային պաշարը

1. Ռազմավարական ջրային պաշարը այնպիսի որակի և քանակի ջրերն են, որոնք անհրաժեշտ են արտակարգ իրավիճակների պայմաններում (երաշտ, էկոլոգիական աղետներ, էներգետիկ ճգնաժամ և այլն) մարդկանց հիմնական կարիքների բավարարման և ջրային էկոհամակարգերի պահպանման ապահովման համար:

2. Ռազմավարական ջրային պաշարը կարող է ավելացվել՝ օգտագործելի ջրային պաշարի մի մասը կուտակելով Սևանա լճում կամ նոր կառուցվող ջրամբարներում:

3. Ռազմավարական ջրային պաշարը ներառում է Սևանա լճի ծավալի աճը 2005 թվականի հունվարի 1-ից հետո, ջրամբարների մեռյալ ծավալի հնարավոր օգտագործելի մասը, լճերի (բացառությամբ Սևանա լճի) ծավալի օգտագործման ենթակա մասը, ստորերկրյա հոսքը:

4. Ռազմավարական ստորերկրյա ջրային ռեսուրսների ծավալը կազմավորվում է գոյություն ունեցող հորատանցքերի շուրջօրյա շահագործման և լրացուցիչ հորատանցքերի հորատման միջոցով առաջացած հոսքից: Ռազմավարական ստորերկ ջրային ռեսուրսների ծավալները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պարբերաբար ենթակա են ճշգրտ

5. Ռազմավարական ջրային պաշարն օգտագործվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հոդված 8. Ազգային ջրային պաշարը

1. Ազգային ջրային պաշարը ձևավորվում է որպես Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների և օգտագործելի ջրային ռեսուրսների ու ռազմավարական ջրային պաշարի տարբերություն:

2. Ազգային ջրային պաշարի օգտագործումն արգելվում է, բացառությամբ ռազմավարական ջրային պաշարի սպառման դեպքի, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

3. Ազգային ջրային պաշարը ներառում է լճերի ծավալը (այդ թվում՝ Սևանա լճի ծավալը 2005 թվականի հունվարի 1-ի դրությամբ), խորքային ստորերկրյա ջրային ռեսուրսները և սառցադաշտերը՝ մինչև դրանց հալումը:

(8-րդ հոդվածը փոփ. 13.11.19 ՀՕ-212-Ն)

Հոդված 9. Անդրսահմանային ջրային ռեսուրսները

Հայաստանի Հանրապետության անդրսահմանային խոշոր գետերի հոսքը բաշխվում է՝

1) Արաքս և Ախուրյան՝ 1190 մլն մ^3.
2) Դեբեդ՝ 1187 մլն մ^3.
3) Աղստև՝ 337 մլն մ^3.
4) Արփա՝ 731 մլն մ^3.
5) Որոտան՝ 678 մլն մ^3.
6) Ողջի՝ 330 մլն մ^3:

Հոդված 10. Ջրային ռեսուրսների դասակարգումը

1. Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերը՝ գետերը և լճերը, դասակարգվում են ըստ՝

1) նշանակության՝ միջազգային (անդրսահմանային ազդեցության ջրային ռեսուրսներ), հանրապետական (երբ ջրային ռեսուրսը ունի ազդեցություն Հայաստանի Հանրապետության մի քանի ջրհավաք ավազանների վրա), տեղական (երբ ջրային ռեսուրսը ունի ազդեցություն Հայաստանի Հանրապետության մեկ ջրհավաք ավազանի վրա).

2) սնման աղբյուրների՝ հալոցքային, անձրևային, ստորերկրյա.

3) երկարության՝ գետերի համար՝ մեծ, միջին, փոքր, մանր.

4) ծավալի՝ լճերի համար՝ մեծ, փոքր, լճակներ.

5) ջրայնության աստիճանի՝ ջրառատ, միջին, ջրասակավ.

6) հոսքի տարեկան բաշխման՝ հավասարաչափ, անհավասարաչափ, կտրուկ փոփոխական.

7) օգտագործման նշանակության՝ խմելու-կենցաղային, ոռոգման, արդյունաբերական, էներգետիկական, ձկնատնտեսական, ռեկրեացիոն.

8) որակի՝ գերազանց, լավ, միջակ, անբավարար, վատ կարգավիճակների:

2. Հայաստանի Հանրապետության ստորերկրյա ջրերը, ժամանակային փոփոխության բնույթից կախված, ըստ մնայուն ծավալի՝ դասակարգվում են խորքային ոչ ճնշումային ու ճնշումային՝ արտեզյան և ամենամյա վերականգնվող ստորերկրյա ջրերի:

3. Ըստ բնական հանքայնացման՝ Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսները դասակարգվում են՝ քաղցրահամ, ցածր հանքայնացման, միջին հանքայնացման, բարձր հանքայնացման, աղային, գերաղային:

4. Ըստ բնական կազմի՝ Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսները դասակարգվում են՝ անիոնային՝ հիդրոկարբոնատային, կարբոնատային, քլորիդային և կատիոնային՝ կալցիումային, մագնեզիումային, նատրիումային:

5. Ըստ դասակարգման՝ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(10-րդ հոդվածը խմբ. 07.07.22 ՀՕ-317-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Հոդված 11. Հայաստանի Հանրապետության ջրային համակարգերի դասակարգումը

1. Ջրի ազգային ծրագրով սահմանված պետական նշանակության ջրային համակարգերը պետական սեփականություն են և ենթակա չեն մասնավորեցման: Ջրային համակարգերը դասակարգվում են՝ ելնելով դրանց՝

1) ռազմավարական նշանակությունից.

2) սոցիալ-տնտեսական կարևորությունից.

3) բնապահպանական նշանակությունից.

4) խափանման ռիսկի և հնարավոր վթարի ազդեցության գնահատման աստիճանից:

2. Ջրային համակարգերի համար սահմանվում են պետական հատուկ նշանակության, պետական նշանակության առաջին, պետական նշանակության երկրորդ, ինչպես նաև երրորդ, չորրորդ և հինգերորդ կարգերը:

3. Պետական հատուկ նշանակության ջրային համակարգը Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող հիդրոտեխնիկական կառուցվածքների համալիր է, որի վթարը կամ խափանումը կարող է հանգեցնել բազմաթիվ մարդկային զոհերի և (կամ) էկոլոգիական աղետների և (կամ) երկրի տնտեսությանը պատճառել առանձնապես խոշոր չափերի հասնող վնասներ և (կամ) առաջացնել անդրսահմանային ազդեցություն:

4. Պետական նշանակության առաջին կարգի ջրային համակարգը Հայաստանի Հանրապետության համար կարևոր նշանակություն ունեցող հիդրոտեխնիկական կառուցվածքների համալիր է, որի վթարը կամ խափանումը կարող է հանգեցնել մարդկային զոհերի և (կամ) պատճառ հանդիսանալ շրջակա միջավայրում էկոլոգիական արտակարգ իրավիճակների առաջացման համար և (կամ) երկրի տնտեսությանը պատճառել խոշոր չափերի հասնող վնասներ:

5. Պետական նշանակության երկրորդ կարգի ջրային համակարգը հիդրոտեխնիկական կառուցվածքների համալիր է, որի վթարը կամ խափանումը կարող է պատճառ հանդիսանալ շրջակա միջավայրի կայուն զարգացման խախտման համար և (կամ) երկրի տնտեսությանը պատճառել զգալի չափերի հասնող վնասներ:

6. Երրորդ կարգի ջրային համակարգը հիդրոտեխնիկական կառուցվածքների համալիր է, որի վթարը կամ խափանումը

կարող է պատճառ հանդիսանալ շրջակա միջավայրի ժամանակավոր աղտոտման համար և (կամ) երկրի տնտեսությանը պատճառել միջին չափերի հասնող վնասներ:

7. Չորրորդ կարգի ջրային համակարգը հիդրոտեխնիկական կառուցվածքների համալիր է, որի վթարը կամ խափանումը կարող պատճառ հանդիսանալ շրջակա միջավայրի աղտոտման համար և (կամ) երկրի տնտեսությանը պատճառել փոքր չա վնասներ, որոնք հնարավոր կլինի կարճ ժամանակում վերականգնել համակարգն օգտագործողի ուժերով:

8. Հինգերորդ կարգի ջրային համակարգը տեղական նշանակության հիդրոտեխնիկական կառուցվածքների համալիր է, ո շահագործումը և(կամ) օգտագործումը անվտանգ է:

9. Սույն հոդվածի իմաստով տեղական նշանակության հիդրոտեխնիկական կառուցվածքների համալիր համարվում է մե համայնքի նշանակության ջրային համակարգը:

10. Սույն հոդվածի իմաստով վնասի փոքր չափ է համարվում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը չգերազանցող գումարը, միջին չափ է համարվում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հինգհազարապատիկը չգերազանցող գումարը, զգալի չափ է համարվում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից մինչև քսանհազարապատիկը չգերազանցող գումարը, խոշոր չափ է համարվում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկից մինչև հարյուրհազարապատիկը չգերազանցող գում առանձնապես խոշոր չափ է համարվում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհազարապատիկը գերազանցող գումարը:

Հոդված 12. Ջրային համակարգերի դասակարգումը՝ ըստ վթարի վտանգավորության աստիճանի

1. Ըստ վթարի վտանգավորության աստիճանի՝ ջրային համակարգերը դասակարգվում են՝ առանձնապես բարձրռիսկայ բարձրռիսկային, միջինռիսկային և ցածրռիսկային: Սույն օրենքի շրջանակներում ռիսկը սահմանվում է որպես հիդրոհանգու բնակչության և (կամ) շրջակա միջավայրի համար որոշակի մակարդակի վտանգի իրականացման հնարավոր անցանկալի հետևանքների հավանական չափ ու նկարագիր: Ռիսկը գնահատվում է իրադարձությունների հավանական զարգացումների և անվտանգության սահմանային ցուցանիշների համադրմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Ջրային համակարգերում ներառված այն հիդրոտեխնիկական կառուցվածքները, որոնց հնարավոր վթարը կարող է հանգեցնել պետական հատուկ նշանակության ջրային համակարգերի դասակարգմանը համապատասխանող հետևանքների, համարվում են առանձնապես բարձրռիսկային:

3. Ջրային համակարգերում ներառված այն հիդրոտեխնիկական կառուցվածքները, որոնց հնարավոր վթարը կարող է հանգեցնել պետական նշանակության առաջին և երկրորդ կարգի ջրային համակարգերի դասակարգմանը համապատասխա հետևանքների, համարվում են բարձրռիսկային:

4. Ջրային համակարգերում ներառված այն հիդրոտեխնիկական կառուցվածքները, որոնց հնարավոր վթարը կարող է հանգեցնել երրորդ կարգի ջրային համակարգերի դասակարգմանը համապատասխանող հետևանքների, համարվում են միջինռիսկային:

5. Ջրային համակարգերում ներառված այն հիդրոտեխնիկական կառուցվածքները, որոնց հնարավոր վթարը կարող է հանգեցնել չորրորդ և հինգերորդ կարգի ջրային համակարգերի դասակարգմանը համապատասխանող հետևանքների, համարվում են ցածրռիսկային:

Հոդված 13. Պետական նշանակության ջրային համակարգերի դասակարգումը բնորոշող չափանիշներ

1. Պետական նշանակության ջրային համակարգերը բնորոշող չափանիշներն են՝

1) դրանց ռազմավարական նշանակությունը.

2) սոցիալ-տնտեսական, բնապահպանական նշանակությունը.

3) ջրային համակարգերի օգտագործման խափանման ռիսկը.

4) վթարների առաջացման դեպքում հնարավոր վտանգների առաջացման ռիսկը՝ բնակչության մեծ խմբերին ջրամատակարարման ապահովման խնդիրների առաջացումը, որպես դրանց հետևանք սոցիալական դժգոհությունների առաջացումը.

5) շրջակա միջավայրում էկոլոգիական արտակարգ իրավիճակների առաջացումը:

2. Պետական հատուկ նշանակության ջրային համակարգեր, պետական նշանակության առաջին և երկրորդ կարգի ջրայ համակարգեր համարվում են ռազմավարական նշանակություն ունեցող ջրային համակարգերը, որոնց համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում դեպոնացվում են միջոցներ արտակարգ իրավիճակները կանխելու համար: Պետակ հատուկ նշանակության ջրային համակարգերի ցանկը սահմանում է սույն օրենքը:

3. Երրորդ կարգի ջրային համակարգերը, որոնք չեն կառուցվել մասնավոր ներդրումների միջոցով, կարող են սեփականու

իրավունքով տրվել համայնքներին:

4. Չորրորդ կարգի ջրային համակարգերը, որոնք չեն կառուցվել մասնավոր ներդրումների միջոցով, կարող են սեփականության իրավունքով տրվել համայնքներին, ջրօգտագործողների ընկերություններին, դրանց միություններին և հանր ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների:

5. Հինգերորդ կարգի ջրային համակարգերը կարող են տրվել մասնավորեցման:

6. Պետական նշանակության ջրային համակարգերի իրավական, կազմակերպական, տնտեսական և այլ ռեժիմներն ու դ պահպանության և շահագործման պահանջները տարածվում են նաև մասնավոր ներդրողների կառուցած այն ջրային համակարգերի վրա, որոնք իրենց բնութագրերով համապատասխանում են պետական նշանակության ջրային համակարգերի չափանիշներին: Մասնավոր ներդրողների կառուցած ջրային համակարգերի վրա պետական նշանակության ջրային համակարգերի ռեժիմների տարածումը չի առաջացնում դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխություն:

Հոդված 14. Պետական նշանակության ջրային համակարգերը և դրանց ցանկը

Պետական նշանակության ջրային համակարգերն են՝

1) ջրամբարները, բացառությամբ Ջրի ազգային ծրագրով սահմանված այն ջրամբարների, որոնց հնարավոր վթարի վտանգավորության աստիճանը ցածրռիսկային է կամ անվտանգ.

2) խմելու-կենցաղային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, այդ թվում՝ կապտաժները, մաքրման կայանները, օրվա կարգավորիչ ջրամբարները, մայրուղային ջրատարները (ինքնահոս, մեխանիկական) իրենց շահագործման համար անհրաժեշտ բոլոր հանգույցներով, ջրահեռացման ներքին ցանցերը.

3) հիդրոտեխնիկական թունելները.

4) ոռոգման ջրանցքները, ջրանցույցները, դյուկերները.

5) երկու և ավելի համայնքներ ոռոգման ջուր մղող պոմպակայանները.

6) ցամաքուրդային կառուցվածքները.

7) հակասելավային կառուցվածքները.

8) պոչամբարները և պոչատարերը.

9) կեղտաջրերի հեռացման ցանցերը՝ իրենց հանգույցներով:

Հոդված 15. Պետական հատուկ նշանակության ջրային համակարգերի ցանկը և դրանց պահպանման ծախսերի հաշվարկումն ու փոխհատուցումը

1. Պետական հատուկ նշանակության ջրային համակարգերի պահպանման ծախսերը հաշվարկվում և ամրագրվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում կամ փոխհատուցվում են երաշխավորված ֆինանսական աղբյուրից: Ջրային համակարգը օգտագործող անձի կողմից իրացված ջրերի դիմաց վճարումներից կազմավորված հատույթի այն մասը, նախատեսվում է պետական հատուկ նշանակության ջրային համակարգերի պահպանման համար, փոխանցվում է Հայաստ Հանրապետության պետական բյուջե:

2. Պետական հատուկ նշանակության ջրային համակարգերն են՝

1) Որոտան-Արփա-Սևան հիդրոհամալիրը (Արփա-Սևան և Որոտան-Արփա թունելները, Կեչուտի ջրամբարը և Էլեգիսի հիդրոհանգույցը).

2) Ախուրյանի ջրամբարը.

3) «Արփի-Լիճ» ջրամբարը.

4) Ազատի ջրամբարը.

5) Ապարանի ջրամբարը.

6) Ջողազի ջրամբարը.

7) Սպանդարյանի ջրամբարը.

8) Տոլորսի ջրամբարը.

9) Մանթաշի ջրամբարը.

10) Հեր-Հերի ջրամբարը.

11) Հախումի ջրամբարը.

12) Տավուշի ջրամբարը.

13) Հալավարի ջրամբարը.

14) Սևաբերդի ջրամբարը.

15) Դավիթ-Բեկի ջրամբարը.

16) Այգեձորի ջրամբարը.

17) Կառնուտի ջրամբարը.

18) Վարդաքարի ջրամբարը.

19) Սառնաղբյուրի ջրամբարը.

20) Թավշուտի ջրամբարը.

21) Զանգակատան ջրամբարը.

22) Երևանի ջրամբարը.

23) Գեղիի ջրամբարը.

24) Մարմարիկի ջրամբարը (կառուցվող).

25) Առինջի հեղեղակարգավորիչը՝ Գետառ հեղեղատարով.

26) ջրամատակարարման օրվա կարգավորման ջրամբարները.

27) Արաքս գետի վրա Կարա-Կալայի հիդրոհանգույցը.

28) ջրամատակարարման նպատակով օգտագործվող հատուկ, պետության կողմից պահպանվող ստորգետնյա և այլ ջրա կառուցվածքները.

29) Արաքս գետի ափապաշտպան կառուցվածքները.

30) ոռոգման և էներգետիկ նշանակության 5,0 մ³/վրկ-ում և ավելի թողունակությամբ ջրանցքները:

Գ Լ Ո Ւ Խ 5

ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՈՒՄԸ

Հոդված 16. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի գերակա խնդիրները

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի գերակա խնդիրներն են՝

1) ոռոգման և խմելու ջրի համակարգերի կայուն շահագործման ապահովումը, կառավարման մեխանիզմների կատարելագործումը.

2) ոռոգման ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավումը, ոռոգելի տարածքների ավելացումը, ոռոգելի հող մելիորատիվ վիճակի բարելավումը՝ ոռոգման առկա համակարգերը վերականգնելու և դրանք ընդլայնելու եղանակով՝ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ռազմավարության և ծրագրերի իրականացմանը համահունչ.

3) ջրամատակարարման և ջրահեռացման ընկերությունների ֆինանսական կայունության ապահովումը.

4) հավասար, հուսալի, անընդհատ և հասանելի ջրամատակարարման և ջրահեռացման ապահովումը.

5) բնակչության համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատչելիության բարձրացումը.

6) անապահով սպառողներին և ջրամատակարարման և ջրահեռացման հավասար և հասանելի ապահովման տեսանկյու մեկուսացված և խոցելի խմբերում ընդգրկված անձանց ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվելո հավասար հնարավորության ապահովումը.

7) ջրային համակարգերի շահագործման, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ոլորտ մասնավոր հատվածի ներգրավումը, համակարգերի մասնակցային կառավարման զարգացումը.

8) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ տրամադրող ընկերությունների գործունեության նկատմամբ մոնիթորինգի և վերահսկողության իրականացումը.

9) շահագործման նվազագույն տեխնիկական պահանջների սահմանումը և հսկողությունը.

10) խմելու ջրամատակարարման, ցամաքուրդային, ոռոգման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների որակի և կառավարման նկատմամբ հսկողության ապահովումը.

11) ջրօգտագործողների կողմից ջրամատակարարման և հեռացվող կեղտաջրերի որակի մոնիթորինգի իրականացման բարելավումը, որն ուղղված է լինելու ջրային ռեսուրսները աղտոտումից պաշտպանելուն.

12) շրջակա միջավայրի աղտոտման նվազեցումը.

13) ջրի հաշվառման համակարգի ներդրումը.

14) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում ջրակորուստների նվազեցումը.

15) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավման նպատակով ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը.

16) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման, կառուցման և շահագործման գործընթացու արդիական տեխնոլոգիաների կիրառումը.

17) ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրումը.

18) ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման ապահովումը.

19) ջրամատակարարմանը, ջրահեռացմանը (կեղտաջրերի մաքրմանը) ներկայացվող չափորոշիչների սահմանումը և ապահովումը:

(16-րդ հոդվածը խմբ., լրաց. 07.07.22 ՀՕ-317-Ն)

Հոդված 17.

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի խնդիրների լուծումը

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի խնդիրների լուծման ուղիները սահմանվում են ջրօգտագործման առանձ ոլորտների զարգացման ռազմավարություններով, որոնք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 18. **Խմելու-կենցաղային ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում խնդիրները, դրանց գերակայությունը և ոլորտի զարգացման հեռանկարները**

1. Խմելու ջրի ոլորտի զարգացման հեռանկարներն ամրագրվում են խմելու ջրի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագրում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Խմելու-կենցաղային ջրամատակարարման համակարգերի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով մշտա իրականացվում են դրանց հուսալիության անհրաժեշտ մակարդակի պահպանմանն ուղղված միջոցառումներ:

3. Խմելու ջրի ոլորտում խնդիրների լուծումը իրականացվում է՝ հիմք ընդունելով հետևյալ գերակայությունները.

1) պահանջվող որակի և անհրաժեշտ քանակի ջրով ապահովումը.

2) անընդմեջ ջրամատակարարման ապահովումը.

3) քաղաքային և գյուղական բնակավայրերում անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների զարգացումն ու բարելավումը՝ ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովումը.

4) ***(կետն ուժը կորցրել է 07.07.22 ՀՕ-317-Ն)***

5) ջրամատակարարման համակարգերում ջրի կորուստների նվազեցումը.

6) էներգատար ջրամատակարարման համակարգերի հնարավորինս փոխարինումը ինքնահոս համակարգերով.

7) ջրի հաշվառման համակարգի ներդրումը և զարգացումը, ջրի տնտեսմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

8) կեղտաջրերի մաքրման կայանների անհրաժեշտ վերանորոգումը և նորերի կառուցումը.

9) ջրօգտագործողների կողմից արտադրական կեղտաջրերի նախնական մաքրում իրականացնելու մեխանիզմների ստեղծումը.

10) օրվա կարգավորիչ ջրամբարների վերանորոգումը և նորերի կառուցումը.

11) ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ենթակառուցվածքի զարգացումը.

12) համակարգի կառավարման մեխանիզմների կատարելագործումը.

13) ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը.

14) կեղտաջրերի մաքրման նոր տեխնոլոգիաների ներդրումը.

15) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մակարդակի բարձրացումը (տեխնիկական վերազինում և կադրերի պատրաստում).

16) ջրամատակարարման համակարգերի վերականգնման և կառուցման գործընթացում արդիական տեխնոլոգիաների կիրառումը:

4. Ջրամատակարարման ժամերի քանակը և քսանչորսժամյա ջրամատակարարմանն անցնելու ժամանակացույցը՝ ըստ կենտրոնացված ջրամատակարարման համակարգերի սպասարկման տարածքների և(կամ) ենթատարածքների, սահմանում Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Անապահով սպառողների ու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հավասա հասանելիության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև սուբսիդիաների տրամադրման կարգը սահմանում է Հայաստան Հանրապետության կառավարությունը:

(18-րդ հոդվածը խմբ., փոփ. 07.07.22 ՀՕ-317-Ն)

Հոդված 19. **Ոռոգման ոլորտի խնդիրները և զարգացման հեռանկարները**

1. Ոռոգման ոլորտի զարգացման հեռանկարներն ամրագրվում են ոռոգման ոլորտի ռազմավարական զարգացման ծրագ որը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ոռոգման համակարգերի զարգացման հիմնական նպատակն է գյուղատնտեսական մթերքների հուսալի արտադրությ ապահովումը, բերքատվության և գյուղատնտեսական արտադրության եկամտաբերության բարձրացումը, շահագործման և պահպանման ծախսերի կրճատումը:

3. Ոռոգման ջրի խնդիրների լուծումը իրականացվում է՝ հիմք ընդունելով հետևյալ գերակայությունները.

1) ծառայությունների հասանելիության, մատչելիության և որակի բարձրացումը.

2) սուբսիդավորման քաղաքականության հասցեականության բարձրացումը.

3) մեխանիկական ջրամատակարարումից ինքնահոսի անցումը.

4) ոռոգման ոլորտի ենթակառուցվածքների ընդլայնումը և զարգացումը, ոռոգման արդիական տեխնոլոգիաների ներդրու

5) ոռոգման համակարգերի կառավարման և շահագործման արդյունավետության բարձրացումը.

6) հաշվառման և վճարների հավաքագրման համակարգերի բարելավումը, այդ թվում՝ տարբերակված սակագների համակարգի ներդրումը.

7) մասնակցային կառավարման համակարգի զարգացումը՝ ջրօգտագործողների ընկերությունների և դրանց միությունն ստեղծման ճանապարհով.

8) հանրապետության ոռոգելի հողատարածքների ջրապահովության բարձրացումը.

9) ոռոգման նորմերի և ռեժիմների կարգավորումը.

10) հողերի մելիորատիվ վիճակի բարելավումը.

11) առանձին տարածաշրջաններում սոցիալական հնարավոր բացասական ազդեցությունը մեղմացնելու նպատակով ոռոգման համակարգի ուղղակի սուբսիդավորման դադարեցումից տնտեսված բյուջետային միջոցները Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է ուղղի այդ տարածաշրջաններ:

Հոդված 20. Հիդրոէներգետիկայի ոլորտի զարգացման հեռանկարները

1. Հիդրոէներգետիկայի ոլորտի զարգացման հեռանկարներն ամրագրվում են հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարակ զարգացման ծրագրում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Հիդրոէներգետիկայի ոլորտում խնդիրների լուծումն իրականացվում է՝ հիմք ընդունելով հետևյալ գերակայությունները

1) հիդրոէլեկտրակայանների (այսուհետ՝ հէկ) կառուցման խրախուսումը՝ սեփական էներգետիկ պաշարներն առավելագույնս օգտագործելու նպատակով.

2) առկա հէկ-երի տեխնիկական վիճակի ուսումնասիրումը՝ դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

3. Հիդրոէներգետիկայի զարգացման համար կազմվում է կառուցման համար նախատեսվող հիդրոէներգետիկ կառուցվածքների տեղակայման մանրամասն սխեմա, տեղակայման սխեմայի յուրաքանչյուր հիդրոէներգետիկ կառուցվածք վերաբերյալ տրվում է հիմնական տեղեկատվություն նրա տեխնիկական ցուցանիշների, կատարվելիք ներդրումների, շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության և սպասվող տնտեսական արդյունքների մասին:

Գ Լ Ո Ւ Խ 6

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 21. Ջրային ռեսուրսների մոնիթորինգը

1. Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների մոնիթորինգը իրականացվում է ըստ մոնիթորինգային ծրագրերի: Մոնիթորինգային ծրագրերը կազմվում են տեղեկատվական կարիքների և ռազմավարության հիման վրա՝ ելնելով ջրավազան կառավարման պլանների մշակման և իրականացման համար անհրաժեշտ տվյալների պահանջներից:

2. Հայաստանի Հանրապետության մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգային ծրագրերն իրականացվում են ազգային և ջրավազանային մակարդակներում:

3. Մոնիթորինգային ծրագիրը ներառում է՝

1) ցուցանիշների համախմբի ընտրությունը.

2) ջրային ռեսուրսի հետազոտվող հատվածի, նմուշառման, դիտարկման կամ ջրաչափական կետի ընտրությունը.

3) հետազոտվող միջավայրի (ջուր, հատակային նստվածքներ, բիոտա և այլն) ընտրությունը.

4) նմուշառումների և (կամ) չափումների պարբերականության որոշումը.

5) միջազգային ստանդարտներին ներդաշնակ նմուշների պահմանը և փոխադրմանը ներկայացվող պահանջների ընտրությունը.

6) միջազգային չափանիշներին ներդաշնակ լաբորատոր վերլուծության և չափման մեթոդների ընտրությունը.

7) ստացված տվյալների որակի վերահսկման ու գնահատման համակարգի և դրա ներդրման պլանի մշակումը.

8) տվյալների օպերատիվ և համապարփակ մշակման, տվյալներին համապատասխան նպատակային տեղեկատվության վերափոխման սխեմայի մշակումը.

9) տեղեկատվության ներկայացման հիմնական ձևերի մշակումը և (կամ) ընտրությունը.

10) տվյալները շահագրգիռ անձանց տրամադրելու կարգի և ժամանակի համաձայնեցումը.

11) ծախսերի պլանավորումը և ֆինանսավորման աղբյուրների հստակեցումը.

12) ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների գնահատման չափորոշիչների որոշումը.

13) ծրագրի իրականացման, գնահատման և թարմացման ժամանակացույցի մշակումն ու ընդունումը:

4. Ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավումը ստեղծում է ջրային ռեսուրսների օգտագործման, զարգացման և կառավարման վերաբերյալ որոշումների կայացման և պլանավորման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգը:

5. Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման կանխմանն ուղղված միջոցառումները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հոդված 22. Տվյալների կառավարումը

1. Ջրային պետական կադաստրի վարումը պետության կողմից պարտադիր իրականացվող գործառույթ է, և այդ համակարգում ներառված տվյալները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կրում հանրային հասանելիության բնույթ՝ միաժամանակ համարվելով պաշտոնական:

2. Ջրային պետական կադաստրի տեղեկատվական համակարգը ծառայում է որպես ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պաշտոնական տեղեկատվության շտեմարան և ընդգրկում է վարչաիրավական և տեխնիկական տվյալներ ջրային ռեսուրսների և համակարգերի վերաբերյալ:

3. Ջրային պետական կադաստրի տեղեկատվական համակարգը բաղկացած է ջրային ոլորտի պետական լիազորված մարմինների կողմից ազգային և ջրավազանային մակարդակներում մշակվող և պահվող տվյալների թեմատիկ բազաներից ստացվող ամփոփ տեղեկատվությունից:

4. Պետական ջրային կադաստրի տեղեկատվական համակարգի բաղկացուցիչ մաս կազմող տվյալների բազաները համակցվում են միմյանց Հայաստանի Հանրապետության կառավարության ընդունած ջրային ռեսուրսների կոդավորման համակարգի միջոցով՝ որպես յուրաքանչյուր ջրավազանին վերաբերող տեղեկատվության ինտեգրման և քարտեզագրման միջ

Հոդված 23. Ջրային ռեսուրսների պլանավորումը

1. Ջրային ռեսուրսի պլանավորումն իրականացվում է համապարփակ կառավարման պլանավորման սկզբունքով:

2. Ջրային ռեսուրսների համապարփակ պլանավորումը նպատակաուղղված է հավասարակշռելու ջրօգտագործողների, ներառյալ՝ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապակցված փոխհարաբերությունները, ապահովելով՝

1) կոմունալ-կենցաղային, գյուղատնտեսությանը, արդյունաբերությանը և այլ ջրօգտագործողներին բավարար քանակի և պահանջվող որակի ջրի մատակարարումը.

2) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովումն ու մատչելիությունը.

3) ջրային ռեսուրսների վերարտադրությունը.

4) ջրային ռեսուրսների և հարակից կենդանական ու բուսական աշխարհի պահպանությունը.

5) ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացումը և ջրի խնայողությունը.

6) կեղտաջրերի մաքրումը.

7) ջրերի վնասակար ազդեցություններից պաշտպանությունը.

8) շրջակա միջավայրի պահպանումը.

9) ջրային ռեսուրսների հետ կապված անդրսահմանային խնդիրների նվազեցումը, վերացումը և բացառումը.

10) ջրային ռեսուրսների և համակարգերի օգտագործման ու կառավարման նպատակների իրագործմանն ուղղված ծախսերի արդյունավետ իրականացումը:

(23-րդ հոդվածը խմբ. 07.07.22 ՀՕ-317-Ն)

Հոդված 24. Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերն ու ջրի որակի նորմերը

(վերնագիրը փոփ. 07.07.22 ՀՕ-317-Ն)

1. Ջրի որակի նորմերը սահմանվում են՝ ելնելով առողջապահական, ինչպես նաև ջրային ռեսուրսների դեգրադացումը, հյուծումը, աղտոտումը կանխելու, բնապահպանական թողքերը ապահովելու պահանջներից և ներառում են բոլոր հավանական աղտոտող նյութերի թույլատրելի սահմանները, ըստ տարիների դրանց նվազեցման ցուցանիշները՝ միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու նպատակով:

2. Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերը սահմանվում են՝ ելնելով ջրի որակի նորմերից և հաշվի առնելով յուրաքանչյուր ջրային ռեսուրսի աղտոտվածության փաստացի իրավիճակը և ինքնամաքրման ունակությունը

3. Ջրի որակի նորմերը, կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի համար սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և հետագայում ներառվում ջրավազանային կառավարման պլաններում:

(24-րդ հոդվածը խմբ. 02.02.10 ՀՕ-7-Ն, փոփ. 07.07.22 ՀՕ-317-Ն)

Հոդված 25. Հատուկ պահպանվող ավազանային կառավարման տարածքների ցանկը

Հատուկ պահպանվող ավազանային տարածքների կամ դրանց որևէ մասի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ դրանց մակերևութային և (կամ) ստորերկրյա ջրերի կամ դրանցով պայմանավորվ կենդանական և (կամ) բուսական աշխարհի համար պահպանության հատուկ համակարգի կիրառումը կարգավորվում է բնու հատուկ պահպանվող տարածքների մասին օրենսդրությամբ և այդ տարածքների կառավարման պլաններով:

Հոդված 26. Ջրային ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետն գոտիների սահմանումը

1. Արտակարգ էկոլոգիական իրավիճակի և էկոլոգիական աղետների գոտիները տարածքի տեղամասեր են, որտեղ բնակ երևույթների, տնտեսական կամ այլ գործունեության հետևանքով շրջակա միջավայրում տեղի են ունեցել բացասական փոփոխություններ, որոնք սպառնում են բնակչության առողջությանը, բնական էկոհամակարգերի հավասարակշռվածությա բուսական և կենդանական աշխարհին: Արտակարգ էկոլոգիական իրավիճակի և էկոլոգիական աղետների գոտիների տարածքներում մարդկանց կյանքի, առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող բնական ռեսուրսների օգտագործման հետ կապված տնտեսական գործունեության որոշակի տեսակները դադարեցվում կամ սահմանափակվում են, և միջոցներ են ձեռնարկվում բնական ռեսուրսների վերականգնման ու վերարտադրության ուղղությա

2. Ջրային ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետների գոտիները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ելնելով առաջացած իրավիճակի տևողությունից, կայունությունից, ռեսո ինքնավերականգնման ունակությունից:

Հոդված 26.1. Ջրերի վնասակար ներգործության վտանգների և ռիսկերի կառավարման պլանների պահանջները

1. Ջրերի վնասակար ներգործության վտանգների և ռիսկերի կառավարման պլանները կազմում է արտակարգ իրավիճակ բնագավառում լիազոր մարմինը:

2. Ջրերի վնասակար ներգործության ռիսկերի կառավարման պլանները ներառում են հեղեղումների և ջրերի վնասակար ներգործությունների ռիսկերի գնահատումն ու քարտեզները, սողանքային գոտիների քարտեզները, ջրերի վնասակար ներգործության հետևանքով հողերի ճահճացման և աղակալման ենթակա տարածքների նկարագրությունը, ջրերի վնասակա ներգործության կանխատեսումները, դրանց առաջացման պատճառները, ռիսկերի կառավարման մոտեցումներն ու միջոցառումները, միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

3. Ջրերի վնասակար ներգործության ռիսկերի կառավարման պլանները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(26.1-ին հոդվածը լրաց. 07.07.22 ՀՕ-317-Ն)

Հոդված 27. Կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների քայքայման սպառնալիքները, ջրաէկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների կանխմանն ուղղված համապատասխան միջոցառումների սահմանումը և բնակավայրերը, տնտեսակա արժեք ներկայացնող տարածքները և բնակչության գույքը վարարումների, սելավների և սողանքների ռիսկից պաշտպանելու ծրագրերը

1. Կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների քայքայման սպառնալիքների և ջրաէկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների կանխմանն ուղղված համապատասխան միջոցառումները սահմա է շրջակա միջավայրի ոլորտի պետական լիազոր մարմինը:

2. Միջոցառումների մշակման ընթացքում ապահովվում են՝

1) կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների գնահատումը, գույքագրումը և քարտեզագրումը.

2) կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների վրա ազդեցության գնահատումը.

3) շրջակա միջավայրի վրա գերխոնավ տարածքների ազդեցության գնահատումը.

4) ոլորտի պատասխանատու մարմինների միջև տվյալների փոխանակման և համագործակցության ապահովման մեխանիզմների մշակումը և իրականացումը.

5) կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների էկոհամակարգերի պահպանությանն ուղղված միջոցառումների մշակումը և այլն:

3. Բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները և բնակչության գույքը վարարումների, սելավների և սողանքների ռիսկից պաշտպանելու ծրագրերը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը և որպես Ջրի ազգային ծրագրի թարմացում՝ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ սույն օրենքի պահանջներ համապատասխան:

(27-րդ հոդվածը փոփ. 04.03.20 ՀՕ-121-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 7

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՀԱՄԱԼԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 28. Առաջարկի գերակայությունը պահանջարկի գնահատման խնդրում

Ջրային ռեսուրսի նկատմամբ պահանջարկի գնահատման խնդրում ջրի առաջարկը կրում է գերակա բնույթ ոչ միայն ջրաէկոհամակարգի, այլ նաև տվյալ էկոհամակարգի էկոլոգիական հավասարակշռությունը պահպանելու տեսանկյունից:

Հոդված 29. Ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումը

1. Ջրի առաջարկի և պահանջարկի գնահատման հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմա է ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայեցակարգը, որը հիմնավորում է հանրապետության տարածքում կազմավորվող ջրային ռեսուրսների առաջարկի հեռանկարը, որի հիմքում դրված են ջրամբարներում ջրի կարգավորման ծրա մշակման անհրաժեշտությունը, դրա հոսքերի կարգավորման հնարավորությունները և դրանց հետագա օգտագործման ռազմավարությունը:

2. Ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայեցակարգը ներառում է՝

1) ջրային ռեսուրսների հնարավոր բացասական հաշվեկշռի պայմաններում հանրապետության ջրի պահանջարկի բավարարման հեռանկարային խնդիրների լուծման ուղիները.

2) ջրերի վնասակար ազդեցությունների կանխարգելման և մեղմացման միջոցառումները.

3) ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիները.

4) ջրային ռեսուրսների օգտագործման ռազմավարության հստակեցումը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքից.

5) ջրի կորուստների հնարավորինս նվազեցմանն ուղղված միջոցառումները:

Հոդված 30. Ջրային ռեսուրսների պահանջարկի կառավարումը

1. Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների պահանջարկը գնահատվում է՝ ըստ ստորև բերված ջրօգտագործ ուղղությունների՝

1) խմելու - կենցաղային և տնտեսական սպառման համար.

2) գյուղատնտեսական՝ հողերի ոռոգման, աղակալած հողերի լվացման, ամառային արոտների ջրարբիացման համար.

3) արդյունաբերական՝ արտադրական և արդյունաբերական գործընթացների կազմակերպման համար.

4) ձկնաբուծական.

5) ռեկրեացիոն՝ ձկնորսության, լողի, նավարկության և գեղագիտական վայելքի համար.

6) էներգետիկ՝ հէկ-երում էլեկտրաէներգիայի արտադրության, ջերմաէլեկտրակայաններում և ատոմակայանում տեխնոլոգիական պրոցեսների ապահովման, ջերմամատակարարման համակարգերում օգտագործման համար և այլն.

7) բնապահպանական՝ էկոլոգիական թողքի ապահովման, հոսքի տեղափոխման և այլն:

2. Խմելու-կենցաղային, գյուղատնտեսական, էներգետիկ, ձկնաբուծական, ռեկրեացիոն և արդյունաբերական նպատակնե ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի գնահատումները՝ ըստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Տարբեր նպատակներով ջրօգտագործման ջրի պահանջարկի կանխատեսումները 2007-2021 թվականների կտրվածքով հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Գ Լ Ո Ւ Խ 8

ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հոդված 31. Ջրային ոլորտի հիմնախնդիրները

Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտի հիմնախնդիրները սահմանվում են ըստ օրենսդրական և ինստիտուցիոնս պահանջների, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման հիմնական կարիքների:

Հոդված 32. Ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումների փուլայնությունը

Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների փուլային ծրագիր կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հիմք ընդունելով սույն և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների փուլային ծրագիրը Հայաստանի Հանրապետությա կառավարության սահմանած կարգով ենթակա է պարբերաբար թարմացման՝ միջոցառումների ծրագրային դրույթների լրամշակման և նոր միջոցառումների ավելացման նպատակով:

Հոդված 33. Ջրի ազգային ծրագրի իրականացման կարճաժամկետ միջոցառումները

1. Ջրի ազգային ծրագրի կարճաժամկետ միջոցառումների իրականացումը նախատեսվել է մինչև 2010 թվականը և ներա է ջրային ռեսուրսների և համակարգերի արդյունավետ կառավարմանը և պահպանությանն ուղղված 29 միջոցառումներ:

2. Ջրի ազգային ծրագրի կարճաժամկետ միջոցառումները ներկայացվում են սույն օրենքի Հավելվածում, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է տարեկան ծրագրեր՝ ելնելով տվյալ տարվա միջնաժամկե ծախսային ծրագրերի բյուջետային հայտերի քննարկման արդյունքներից:

Հոդված 34. Ջրի ազգային ծրագրի իրականացման և թարմացման գործընթացը

1. Սույն օրենքով սահմանված կարգով միջոցառումների իրականացման մասին պատասխանատու պետական լիազոր մարմինները մինչև յուրաքանչյուր տարվան հաջորդող տարվա մարտի 25-ը Հայաստանի Հանրապետության կառավարությո ներկայացնում յուրաքանչյուր տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առաջարկություններ Ջրի ազգային ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
(նախադասությունը հանվել է 16.12.16 ՀՕ-16-Ն)

2. Միջոցառումների կատարման համար պատասխանատու մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունը ներա է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի (ավարտված և ընթացքում գտնվող), պատասխանատու կատարողի, օգտագործված ֆինանսական միջոցների, ինչպես նաև չավարտված և չկատարված միջոցառումների հիմնավորման վերաբերյալ:

(34-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-16-Ն)

Հոդված 35. Տնտեսական մեխանիզմները

1. Կարճաժամկետ ժամանակահատվածում ջրային ոլորտի պետական լիազորված մարմիններն իրականացնում են ջրայ ռեսուրսների կառավարման միջնաժամկետ և երկարաժամկետ ծախսերի և այդ ծախսերի ֆինանսավորման այլընտրանքային մեխանիզմների գնահատումը: Այդ այլընտրանքային մեխանիզմները պետք է պարունակեն առկա ջրառի և աղտոտման համ վճարների համակարգի բարելավման մանրամասն առաջարկությունները՝ կապված ջրային ռեսուրսների մոնիթորինգի, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման և դրանց պայմաններին համապատասխանության ապահովման, ջրայի պետական կադաստրի միջոցով տվյալների կառավարման համակարգերի ու ընթացակարգերի բարելավման ծախսերի փոխհատուցման հետ:

2. Ոլորտի զարգացման նպատակով բնապահպանական և բնօգտագործման վճարների նպատակային օգտագործումը աստիճանաբար պետք է դառնա ոլորտի ֆինանսական ապահովման աղբյուրներից մեկը, որն իր արտացոլումը պետք է գտնվ գործող, ինչպես նաև հետագայում ընդունվելիք իրավական ակտերում:

Հոդված 36. Հասարակության իրազեկությունը և մասնակցությունը

1. Հասարակության մասնակցությունը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության որոշումների ընդունման գործընթացում խթանելու նպատակով ջրային ոլորտի պետական լիազորված մարմինները պետք է սահմանված կարգով ապահովեն հասարակության ծանուցումը ջրային ոլորտում իրականացվող գործունեությանը և ջրային ոլորտին առնչվող տեղեկատվության մատչելիությանը: Հասարակությունը պետք է տեղյակ լինի ջրային ոլորտի խնդիրներին և կարող է նպաստ ջրավազանային համապարփակ պլանավորման և կառավարման գործընթացին՝ ջրավազանային հասարակական խորհուրդ միջոցով:

2. Սույն օրենքի հասարակության ծանուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահման կարգով:

Գ Լ Ո Ւ Խ 9

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Հոդված 37. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 3 ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ռ. Քոչա

2006 թ. դեկտեմբերի 19
Երևան
ՀՕ-232-Ն

Հավելված
«Հայաստանի Հանրապետության ջրի ազգային
ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄ, ՀԱՄԱԼՐՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:	1. ԱՌԿԱ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 121-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ (ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ): 2. ***(ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԵԼ Է 13.11.19 ՀՕ-212-Ն)***	ԲՈԼՈՐ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋՆՈՐԴՈՂ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՅԱՆԿԱՑԱԾ ՆՈՐ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ:	ԲՈԼՈՐ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ:	ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԻԱՄՆԱԿ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՕՐԵՆՔՆԵՐ, ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ, ՀՀ ՋՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ, «ՋՐԻ ԱԶԳ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵ ԵՎ «ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀ ՀՍՏԱԿ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԻՄՔԵՐ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆՈՂ ԳՈՐԾ ՄԻԱՎՈՐ՝ ՈՐՊԵՍ ՋՐԱՅ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԼՈՒԾԱԿՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴ ՄԵԽԱՆԻԶՄ:

(ԲԱԺԻՆԸ ՓՈՓ. 13.11.19 ՀՕ-212-Ն)

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ:	3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԿՐԿՆՎՈՂ ԵՎ ԲԱՑԱԿԱՅՈՂ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՇԱԿՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ՝ ՊԱՏՇԱՃ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼՈՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐԱՁԵՒԱՎՈՐՎԱԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ԲԽՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:	ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ:	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՍՏԱԿԵ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔ

(ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԵԼ Է 13.11.19 ՀՕ-212-Ն)

ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ:	5. ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ:	ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ:	ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՆԳ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ:	ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԻՐԵՆՑ ՏԵՂԵՐՆ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՒԼ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ՝ ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՎ ԻՐԵՆՑ ՂԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՋՐԱՎԱԶԱՆՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՆՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄ

(ԲԱԺԻՆԸ ՓՈՓ. 13.11.19 ՀՕ-212-Ն)

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

ՄԱԿԵՐԵՒՈՒԹՅԻՆ ԵՒ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ:	6. ՄԵԿ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ: 7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՁՈՐԱՑՈՒՄ, ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՁԻՆՈՒՄ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ: 8. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ:	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ: ՍՅՈՒՍ ՉՈՐՍ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՒ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ՝ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ:	ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԻՆԳ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՒ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:	ԸՆՏՐՎԱԾ ԳԵՏԱՎԱԶԱՆ ՕԴԵՐԵՒՈՒԹԱԲԱՆԱԿԱ ՄԱԿԵՐԵՒՈՒԹՅԻՆ ԵՒ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵ (ՈՐԱԿ ԵՒ ՔԱՆԱԿ) ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ, ԱՄՓՈՓՄԱՆ ԵՒ ՎԱՐՄԱ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՄԱԿԱ (ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ) ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, ՈՐԸ, ՈՐՊԵՍ ՄՈԴԵԼԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ, ԿԾԱՌԱՅԻ Ա ԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԵԼՈՒ ՀԱԼ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄ ՎՐԱ ՄՇԱԿՎԱԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ, ՈՐԸ ԿՀԱՆԳԵՑՆԻ ՋՐԱՎԱԶԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՏԱՐԲԵ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵ ՄԻՋԵՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆԸ: ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԵՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՐԵՆ ՉԱՓՎՈՒՄ ԵՆ ՀԻՄՆԱԿԱ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑԱՆՑՈՒ ՈՐԸ ԿԱԶՄՎԱԾ Է ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ 100 ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀՈՐԵՐԻՑ: ՀԱՎԱՔՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՊԱՀՎՈՒՄ ԵՆ ՋՐԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՈՒՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ:	9. ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵԻ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ: 10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԳԱԼԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՒ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ:	ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ: ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՒ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆՊԱՏԱԿԱՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԵՒ(ԿԱՄ) ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՈՒ ՏԱՏԵՍԱԿԱՆ ԼԾԱԿՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ: ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՒ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ:		ԹԱՓԱՆՑԻԿ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐ ՀԻՄՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵ ԿԱՅԱՑՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒ ԴՅՈ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԱԵԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԻՐԱՎԱԿԻՐԱՐԿՈՒՄՆ Ո ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ: ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱՓԱՆՑԻ ՀՈՒՄԱԼԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏ ԱՆՑԿԱՑՈՒՄ:
ՊԵՏԱԿԱՆ ՋՐԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ:	11. ՋՐԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈԴԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՒ ՆԵՐԴՐՈՒՄԸ, ՊԵՏԱԿԱՆ ՋՐԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՒ ՆԵՐԴՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈԴԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈԴԱՎՈՐՈՒՄ:	ՋՐԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ: ՋՐԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ: ԸՍՏ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ: ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՒ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ:	ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱԴԱՍՏՐԻ ՀԵՏԱԳԱ ՁԱՐԳԱՑՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ԵՒ ԿԱԴԱՍՏՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ:	ՋՐԱՅԻՆ ՄԵԿՏՈՐԻ ԱՄՓ ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՏՎՅԱԼ ՇՏԵՄԱՐԱՆ՝ ԵԼԱԿԵՏԱՅ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿ ԲԱԶԱՆԵՐԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԵՐ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԱ ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՋՐ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

ՋՐԱՅԻՆ ՌԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՁԵԿՄԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:	12. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՋՐԱՎԱՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ: 13. ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄ:	ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՒ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ:		ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՋՐԱՎԱՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՋՐ ՈՒԼՈՐՏԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՁԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ: ԳԵՏԱՎԱՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՋՐԱՅԻ ՈՒԼՈՐՏԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐ ԻՐԱՁԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՒ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ:
ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ:	14. ՀՀ ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՒ ԹԱՐՄԱՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ: 15. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ:	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ:	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ:	ՋՐԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳ ՄՇԱԿՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑ ՈՒ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ՄԱՆՐԱԿՐԿԻՏ ՈՒ ՀՍՏԱ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ: ՋՐԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՄՈՒՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԻՄ:
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ:	16. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՒ ՋՐԱՎԱՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ՝ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ: 17. ՄԵԿ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՋՐԱՎԱՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ:	ՆՄԱՆԱՏԻՊ ՋՐԱՎԱՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ՄՆԱՑԱԾ ՉՈՐՍ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ:	ՀԻՆԳ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՋՐԱՎԱՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԹԱՐՄԱՑՈՒՄ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ՝ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՒ ՋՐԱՎԱՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՀՀ ՋՐԱՅ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՏԱՐՈ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՀԻՆԳ ԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՄՈԴԵԼ:

ՍԵՒԱՆԱ ԼՃԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	18. «ՍԵՒԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ» ՏԱՐԵԿԱՆ ԵՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՒ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:	ՍԵՒԱՆԱ ԼՃԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ:	ՍԵՒԱՆԻ ԼՃԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ: ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՒԱՆԱ ԼՃԻ ՎՐԱ ՊԼԱՆԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՒ ԳՆԱՀԱՏՈՒՄ:	ՍԵՒԱՆԱ ԼՃԻ ԿԱՌԱՎԱ ՊԼԱՆԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ:
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՒ ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ:	19. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՒ ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄ՝ Ա) ՄԱԿԵՐԵՒՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ՀՈՍՔԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՒ ՈՐԱԿԱԿԱՆ ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՎԵՐՋԻՆ 4 ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՒ ՈՐԱԿԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՀՈՍՔԻ ՎՐԱ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆՏՐՈՊՈԳԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, Բ) ՄԱԿԵՐԵՒՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՎԱԾ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ, ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՍՔԻ ՃՇԳՐՏՈՒՄ, Գ) ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՏԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԹՈՂՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ՀԱՇՎԱՐԿ, Դ) ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄ ԵՒ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ (ՀՆԱՐԱՎՈՐ) ՋՐԱՌԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ:	ՄԱԿԵՐԵՒՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՒ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ ՋՐԱՎԱՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՒՄ:		ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՃՇԳՐՏՎ ՏՎՅԱԼՆԵՐ:

ՋՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	20. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՆՈՐՄԵՐԻ ՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ ԵՒ ՆԵՐԴՐՈՒՄ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ:	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՆՈՐՄԵՐԻ ՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ԸՆԴՈՒՆՈՒՄ: ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ:	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՆՈՐՄԵՐԻ ՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԻ ԻՐԱՎԱԿԻՐԱՐԿՈՒՄ: ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ:	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՆՈՐՄ ՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԸՆԴՈՒՆՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒՄ:	21. ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՀՈՍՔԻ ՁԵՒԱՎՈՐՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ, ՋՐԱՊԱՀՊԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ, ԷԿՈՏՈՆԸ, ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՒ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՂԵՏԻ ԳՈՏԻՆԵՐԸ, ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԸ:	ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՄՇԱԿՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒՄ:	ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ:	ՄԱԿԵՐԵՒՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԸ ՊԱՀՊԱՆՎԱԾ ԵՆ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ, ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՏԱՐԱԾՔ ԵՒ ՌԵԺԻՄՆԵՐԸ ՍԱՀՄԱ ԵՆ:
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՉՈՐԱՑՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ:	22. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՉՈՐԱՑՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՉՈՐԱՑՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	ՆԱԽԱՁԵՌՆՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՒ ԳՆԱՀԱՏՈՒՄ:	ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ՝ ՆԱԽԿԻՆՈՒ ՉՈՐԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵ ԱՊԱԳԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐԻՆ ԿՀԵՏԵՒԻ ՀՈՂՕԳՏԱԳՈՐ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ (ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒ ԳԵՐԽՈՆԱՎ ՏԱՐԱԾՔՆԵ ՁԿՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹ ԵՒ ԱՅԼՆ) ՀԱՄԱՊԱՏԱՍԽ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:
ՋՐԵՐԻ ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՒ ԳԵՏԱՅԻՆ ՀՈՍՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ:	23. ՋՐԱՄԲԱՐԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	ՋՐԱՄԲԱՐԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ:	ՋՐԱՄԲԱՐԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ:	ՋՐԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ ՋՐԻ ՀՈՍՔԻ ԿՈՒՏԱԿՈՒՄ, ՋՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՌԱՋ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ:

ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	24. ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ:	ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՒ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:	ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԴՈՒՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ:
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՒ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ:	25. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԿԱ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՒ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:	ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԱՐԱԾԱԿԱՆ, ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՒ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄ:	ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԵՒ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ Է ՈՐՊ ՀՁՈՐ ԳՈՐԾԻՔ՝ ՋՐԻ ՈՐ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԽՈՅԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱ
ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ:	26. ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ:	ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:		ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՋՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԴՈՒՆ ԾՐԱԳԻՐ:

(ԲԱԺԻՆԸ ՓՈՓ. 13.11.19 ՀՕ-212-Ն, 07.07.22 ՀՕ-317-Ն)

ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՒ ՋՐԱԷՆԱՅՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:	27. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՒ ՋՐԱԷՆԱՅՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԽՄԵԼՈՒ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ՈՌՈԳՈՒՄ, ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱ ԵՒ ԱՅԼՆ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԴՐԱՆՑ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՒ ՋՐԱԷՆԱՅՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ՆԵՐԴՐՈՒՄ:	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՒ ՋՐԱԷՆԱՅՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:	ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ԿԱՌԱՎԱ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆ ԵՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ: ՄՇԱ ԱՋԳԱՅԻՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂՈՐԴՈՒՄ Է ՀԱՄԱՁ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆՈՐԴՎՈ ՀԱՆՐԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ Ե ՋՐԱԷՆԱՅՄԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՎԵՐԱՆԱԽԱԳԾՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ:

ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ:	28. ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ: 29. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ:	ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:	ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՒ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:	ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԾՐԱԳԻՐ: ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍՏԱԿ ՍԱՀՄԱՆՈՒՄ:

(հավելվածը փոփ. 13.11.19 ՀՕ-212-Ն, 07.07.22 ՀՕ-317-Ն)